[ՍՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ]

Փոխվել է Արարատյան դաշտավայրի համայնապատկերը: Ճիշտ է, նույնն են մնացել Արարատն ու Արագածը, նույն հունով է գնում նաև Արաքսը, սակայն նորն այստեղ առավել նշանակալից է: Երևան-Նախիջևան խճուղով անցնելիս այստեղ ու այնտեղ նշմարվում էին գյուղեր, որոնք շատ էլ չէին տարբերվում Քսենոփոնի նկարագրած հայկական գյուղերից՝ փոքրիկ, կավակերտ, հարթ կտուրներով խղճուկ խրճիթներ, որոնց լույսն ընկնում էր նույն երթիկից, որտեղից թոնիրի ծուխն էր բարձրանում, հայտնի դարձնում, որ այդտեղ գյուղ կա, բնակություն կա: Այսօր այդ հնի հետքն անգամ չկա: Բոլոր գյուղերն էլ նոր են կառուցվել, համաձայն ճարտարապետների կողմից նախորոք կազմված հատակագծերի: Փողոցները նոր են, տները՝ նոր, նոր են նաև բնակիչները, նրանք ոչ թե եկվորներ, այլ այդ գյուղերի երբեմնի բնակիչների որդիքն ու թոռներն են, նրանք իրենք են կառուցել այդ նոր գյուղերը:

Ահա խճուղուց թեքվում և ուղիղ ձգվում է մի գեղեցիկ, լայնահուն ծառուղի, նա վերջանում է ոչ մեծ հրապարակով, որի շուրջը՝ կողք-կողքի կանգնել են գյուղական ակումբն ու մի քանի քարակերտ շենքեր, բոլորն էլ գեղեցիկ, հայրենի ոճով, սիրով կառուցված: Դրանցում տեղավորված են վարչական գրասենյակներ, խանութներ ու ճաշարան, փոստ-հեռագրատուն, խնայդրամարկղ, արհեստանոցներ:

Այդ հրապարակից տարբեր կողմերի վրա ձգվում են էլի ուրիշ փողոցներ, որոնց երկու կողմերում, մայթերի երկայնքով լուսասյուներ են, դեկորատիվ ու պտղատու ծառեր, ապա տնամերձ այգիների մեջ թաղված գողտրիկ մենատներ՝ մեկ-երկու հարկանի, պատշգամբով, տանիքով, հեռուստացույցի, ռադիոընդունիչի անտենաներով: Երբ գիշերն է իջնում Արարատյան դաշտում, ամենուրեք ճառագում են լուսե օազիսներ. դրանք կոլտնտեսային, խորհտնտեսային գյուղերն են՝ գյուղատնտեսական ավաններ:

Ակամայից հիշում ես այն ճարտարապետներին, որոնք տարիներ առաջ անաղմուկ, աչքից հեռու՝ Հողժողկոմատի նախագծային բաժնում ստեղծում էին այդ գյուղերի գլխավոր հատակագծերը:

Հիշում եմ. 1936 թվականն էր. նախագծային բաժին մտավ բարձրահասակ, երազկոտ աչքերով մի երիտասարդ և ցանկություն հայտնեց այդտեղ աշխատել. նա դեռ չէր ավարտել Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը, աշխատում էր դիպլոմի վրա, սակայն աշխատելն անհրաժեշտ էր և նա ընդունվեց ճարտարապետի պաշտոնով: Այդ երիտասարդը, այսօր արդեն վարպետացած, հանրապետության վաստակավոր շինարար, ճարտարապետ Սոս Մանուկյանն էր: Երկու-երեք տարվա ընթացքում երիտասարդ ճարտարապետը կազմեց շուրջ տասը գյուղերի հատակագծեր, որոնց իրագործմամբ անցած երեք ու կես տասնամյակի ընթացքում այդ գյուղերը դարձան բարեկարգ, բարգավաճ սոցիալիստական ավաններ: Այդ աշխատանքն աննկատ չմնաց և ճարտարապետ Սոս Մանուկյանը հրավիրվեց «Հայպետնախագիծ» ինստիտուտ՝ Էջմիածին քաղաքի հատակագիծը կազմելու համար: Նա այդ հանձնարարությունը ևս հաջողությամբ ավարտեց, ստեղծեց քաղաքի նոր հատակագիծը, նրանում նախանշեց վարչական կենտրոնը, արդյունաբերական շրջանները, օղակաձև պուրակը, Արարատ-Արագած առանցքային մայրուղին, պատմական հուշարձաններին վերապահեց այգի-թանգարանների դիրք ու նշանակություն նոր քաղաքում:

Ճարտարապետ Մանուկյանը սիրեց Էջմիածինն ու ուզեց այդտեղ թողնել լավ հիշատակներ, իր աշխատանքային կոլեկտիվի համագործակցությամբ նախագծեց բազմաթիվ բնակելի, առևտրական, կենցաղային նշանակության շենքեր և մի հոյակապ կուլտուրայի պալատ, որն իր դրական հատկանիշներով լավագույններից է այդ կարգի կառույցների թվում: Այդ, իհարկե, միակը չէ, նույնպիսի շքեղությամբ նա մի կուլտուրայի տուն կառուցեց Կանազ գործարանի աշխատավորության համար Երևանում, Ազատության պողոտայի վրա:

Հենց այստեղ, երբեմնի անմշակ տեղանքում ճարտարապետ Մանուկյանի և իր գործընկերների նախագծով կառուցվեց Կանազ և Լամպերի գործարանների բանավանը բազմաթիվ բարձրահարկ բնակելի, դպրոցական ու մանկական հիմնարկների շենքերով: Ապա նախագծեց Սևան քաղաքը, Քաջարան և Օխչի բանավանն ու այլ շենքեր, ինչպես և Երևանի Կալինինի անվան նորաբաց փողոցը: Նա մեծ սիրով ստեղծեց Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանի բանավանը գեղատեսիլ Դեբեդի բարձրադիր ափին, այնտեղ կառուցվող շենքերը և հրապարակի ողջ համալիրը:

Այժմ արդեն ճարտարապետի կողմից նախագծվում են ոչ միայն առանձին կանգնած շենքեր, այլ ամբողջական համալիրներ: Դրանցից են Կույրերի միավորման կոմբինատը և մի տասնյակ բնակելի շենքեր, Մետաղասբիտի և Գյուղէներգոյի բնակելի և վարչական շենքերի շարքը Իսահակյան փողոցի վրա, Սննդարդյունաբերության և ավտոտնտեսության մինիստրությունների բնակելի շենքերի կոմպլեքսը Օրջոնիկիձեի պողոտայի վրա, բնակելի շենքերի երկու համալիրներ ժամացույցի գործարանի մոտ և Հրազդանի բարձրադիր աջափնյա տեղամասում, Շամպայն գործարանի լցման ցեխը Սևանի խճուղու վրա, ակումբային շենքեր Ներքին Զեյվայում, Սևանա կղզում, Սպիտակի շաքարի գործարանի բանավանում և հայրենի Ծովագյուղում, հենց այնտեղ էլ սիրով ու ակնածանքով նախագծեց հուշարձան-կոթող՝ Հայրենական մեծ պա-տերազմում զոհված իր երիտասարդ համագյուղացիների հիշատակին: Նա նախագծեց նաև գյուղական հիդրոէլեկտրակայանների շենքեր ու կամուրջներ ու էլի բազմաթիվ, բազմապիսի մեծ ու փոքր կառուցվածքներ:

Դարերի լռությունից հետո, հայ ճարտարապետությունը մեր օրերում ապրում է իր նոր վերածնությունը աննախադեպ նշանակությամբ և մասշտաբներով: Անցած 50 տարիների ընթացքում հայ շինարարական արվեստը այնպիսի ծաղկում ապրեց, ճարտարապետական այնպիսի գործեր ստեղծվեցին, որոնք հանդիսացան նոր գլուխգործոցներ և, որպես այդպիսիք, արժանացան ընդհանուր ճանաչման:

Մի առիթով մեր վաղամեռիկ տաղանդավոր ճարտարապետ Հովհաննես Մարգարյանը միութենական հանդեսներից մեկում գրել էր «Ալեքսանդր Թամանյանի նախագծերով կառուցված կառավարական տունը և Օպերայի ու բալետի թատրոնի շենքը կարող են եվրոպական ցանկացած պետության մայրաքաղաքի զարդը հանդիսանալ»: 1930-ական թվականներին վերջնականապես ձևավորվեց հայ նոր ճարտարապետությունը և, ի պատիվ նրա հիմնադրի, այն հռչակվեց և կոչվեց Թամանյանական դպրոց:

Հայ նոր ճարտարապետության թամանյանական դպրոցի հետևողական սաների թվում իր ուրույն տեղն ունի ճարտարապետ Սոս Մանուկյանը: Մեր ճարտարապետների շրջանում ընկեր Մանուկյանը համարվում է արգասաբեր, առավել մեծաքանակ նախագծերի հեղինակ, իսկ քանակը բնորոշում է հեղինակի աշխատասիրությունն ու աշխատունակությունը: Նրա աշխատանքները իրենց որակով ևս առանձնանում են, հատկապես երբ կառուցվում, դառնում են իրականություն:

Հետպատերազմյան տարիներին մեր հանրապետությունում ստեղծվեցին բազմաթիվ արդյունաբերական հանգույցներ: Դրանց, ժողովրդատնտեսական այդ շատ կարևոր օբյեկտների տեղադրումը, կոոպերացումը և կառուցապատման սխեմաները մշակվում են «Հայարդնախագիծ» ինստիտուտի համապատասխան բաժնում, որը ղեկավարվում է բազմահմուտ անվանի ճարտարապետ Սոս Մանուկյանի կողմից:

Մանուկյանն իր ստեղծագործական աշխատանքը մեծ հաջողությամբ զուգակցում է հասարակական գործունեության հետ Ճարտարապետների միությունում, իր ինստիտուտում, գիտտեխխորհուրդներում և մեր կյանքի այն բոլոր բնագավառներում, որտեղ նա ի վիճակի է օգտակար լինել:

Փոխվում է մեր հայրենիքի համայնապատկերը, վերակառուցվում, բարեկարգվում ու շքեղանում են բնակավայրերը՝ ծաղկուն գյուղերն ու քաղաքները և այդ հայրենանվեր գործում չեն խնայում իրենց ուժն ու տաղանդը մեր ճարտարապետության հասուն և երիտասարդ վարպետները: